Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ ՀՀ Կոտայքի մարզի <<Արզականի Խ. Խաչատրյանի անվան միջնակարգ դպրոց >> ՊՈԱԿ-ի ՆՁՊ-ի և տեխնոլոգիայի (4 դասաժամ աղջիկների խումբ) ուսուցչի թափուր տեղի համար:

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (Ձև 1):
2. Փաստաթուղթ (դիպլոմ) «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ:
3. Անձնագրի պատճենը:
4. Ինքնակենսագրություն (Ձև 4):
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում):
6. Մեկ լուսանկար՝ 3x4 չափի:
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք:
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև դեկտեմբերի 29-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 14:00-ը, բացի շաբաթ , կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից: Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի :

Մրցույթը տեղի կունենա դեկտեմբերի 30-ին՝ ժամը 14:00-ին , Կոտայքի մարզի Արզականի Խ. Խաչատրյանի անվան միջնակարգ դպրոցում , հասցեն՝ գյուղ Արզական , Բաբաջանյանի 1/1:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (098033935) հեռախոսահամարով: